Շրջակա միջավայրի նախարարության

գլխավոր քարտուղար

պարոն Գրիգոր Գուլյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն, քաղաք Վենետո, 26.06.2023-30.06.2023թթ.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)**
   Եվրոպական հանձնաժողով և Իտալիայի Վենետո նահանգի շրջակա միջավայրի պահպանության տարածքային գործակալություն
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ուսումնական այց՝ ԵՄ Թայեքս (TAIEX) տեխնիկական աջակցության գործիքի տարեկան փաթեթով ներկայացված Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ոլորտում կարողությունների զարգացմանը մասնակցության ապահովում:
6. **Քննարկման թեմաները (հարցերը)**

   1) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ԵՄ օրենսդրության ներկայացում,
   2) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման վերաբերյալ իտալական օրենսդրության ներկայացում,
   3) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ազգային հանձնաժողով ներկայացված ծրագրի (իրական դեպքի) ընդհանրական վերլուծություն,

4) տարածաշրջանային/մարզային շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ներկայացված ծրագրում (իրական դեպք) ջրի, թափոնի և մթնոլորտային օդի բաղադրիչների վերլուծություն,
5) Վենետո նահանգի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) իրականացնող ներքին կառույցի և ՇՄԱԳ տեխնիկական հանձնաժողովի կառավարումը,
6) Իտալիայի Վենետո նահանգի շրջակա միջավայրի պահպանության տարածքային գործակալության գործառույթների ներկայացում:

7. **Հանդիպումները, ելույթները**

1) այցելություն ECO+ECO աղբի տեսակավորման կազմակերպության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթաց անցնող ծրագրի տեղամաս (Պորտո Մարգերայի արդյունաբերական գոտի)
2) ուսումնական այցում ընդգրկված թեմաների շուրջ կլոր սեղան-քննարկում,
3) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ներկայացում, ՀՀ ու Իտալիայի Հանրապետության օրենսդրությունների միջև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի տարբերությունների ու նմանությունների ներկայացում:

**8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**.

Հանդիպումների ընթացքում կարևորվեց ՀՀ-ի և Իտալիայի Հանրապետության միջև փորձի փոխանակումը և փոխհամագործակցության արդյունավետությունը:

**9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

TAIEX տեխնիկական աջակցության գործիքի ներքո իրականացվելիք հետագա ուսումնական այցերի շրջանակներում առաջարկվում է գործնականում ապահովել ՇՄԱԳ գործընթացներում անմիջական և ուղղակի մասնակցություն:

Գործուղվող՝--------------------------------------------------------------------------------------------
(ստորագրությունը, ամսաթիվը) 04.07.23թ.